



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Բ. ՇԵՐՈՂԴԱՅԵՎ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ
ՆՈՐ
ՀԱՂԹԱՆԱԿԸ

1931 թվականի IV ՅԵՌԱՄՍՅԱԿԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՌՈՍՏՈՎԻ ԿՈՒՍԱԿՏԻՎԻՆ,
1931 թվի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ

338.98(47)

Շ-41

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ԿՆՆՑՐՈՆ. ՀՐԱՅԱՐԱԿՅՈՒԹ.

Մոսկվա

1931

Ռուսով-Դոմ

338.98 (217)

2802-10A 32-58
ԱԿՄԵ

Ը-41

Ռ. ՇԵՐՈՂԴԱՅԵՒ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ

1931 թվականի 4-րդ ՅԵՌԱՄՍՅԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ձեկուցում Ռուստովի կուսակցիկից, 1931 թ. հոկտեմբերի 8-ին.

1. ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Այսօր հրապարակված է կուսակցության Յերկրկուսի ու Յերկրգործկուսի փաստաթուղթը մեր յերկրամասի ժողովրդական տնտեսության 4-րդ յեռամսյակի պլանի մասին:

Այդ վորոշման հիմնական խնդիրն է՝ թե կուսակցական կազմակերպություններին և թե բանվորների ու կոլխոզնիկների ամենալայն մասսաներին զորահավաքել այդ տնտեսական պլանի կատարման շուրջը և հենց դրանով էլ ամբողջ տարեկան պլանի կատարման շուրջը:

Մենք անհրաժեշտ ենք համարում այս յեռամսյակը դարձնել մեր տարեկան աշխատանքի հարվածային յեռամսյակ: Մենք նրա վրա կենտրոնացնում ենք մեր ամբողջ ուշադրությունն ու ճիգերը: Մենք այդ խնդրին տալիս ենք առանձին նշանակություն, վորովհետև հենց 4-րդ յեռամսյակը միշտ յեղել է տնտեսական մեծ տեւպերի յեռամսյակ, նոր բերքը յուրացնելու շրջան, վորովհետև տնտեսական հաշվարկի, նոր ձևով աշխատելու վերաբերյալ խոսակցությունները պետք է լողունդից, ազխացինն լողունդից վերածվեն

տարեկան ծրագրի կատարման տոկոսները գործնական աճի: Վորովհետև մենք նպատակ ենք դնում կազմակերպել նոր, վճարային հաղթանակը՝ սոցիալիստական եկոնոմիկայի ձիվի կառուցման գործում, կատարել հնգամյակի յեքորդ տարվա պլանը:

Այս յեռամսյակում մենք վերցնում ենք մեծ և լարված տեմպեր, վորովհետև գտնում ենք, վոր յերկրամասում ամբողջ դրուժյունը թույլ է տալիս վերցնել այդ տեմպերը:

Նախ՝ մենք այս տարվա անցած ժամանակաշրջանում ունենք մեր արդյունաբերության սիստեմատիկ և նշանակալից աճում:

Վերջին 9 ամսում, անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ, արդյունաբերության արտադրանքն աճել է մոտավորապես 24 տոկոսով, չնայած առաջին յեռամսյակի ձեղքվածքին: Ճշմարիտ է, այստեղ պատկերը տարբեր է առանձին մասնաճյուղերում:

Յեթն մենք վերցնենք նավթային արդյունաբերությանը, ապա, անցյալ տարվա հետ համեմատած, մենք ունենք 134 տոկոս, քարածուխի արդյունաբերության մեջ՝ մոտ 115 տոկ, գունավոր մետաղների արդյունաբերության մեջ՝ 120 տոկ, գյուղմեքենաշինարարության մեջ՝ 176 տոկ: յեթն վերցնենք սև մետաղների արդյունաբերությանը (Սուլխի, Անդրեյեվյան գործարան) — միայն 102 տոկոս, ցեմենտի արդյունաբերությանը նույնպես 102 տոկոս մակարդակի վրա յե: Կա նաև, կարծեմ մեր արդյունաբերության միակ մի ճյուղ—անտառամշակությանը, վորը անցյալ տարվա մակարդակից ցածր է քարշ գալիս:

Պետք է նկատի ունենալ, վոր ամառը մենք չենք ունեցել մեր արդյունաբերության մեջ ս ո վ ո Ր ա կ ա ն սեղոնային իջեցում: Վերջին ժամանակաշրջանում,

վերջին ամիսներում, վերջին տասնորյակներում մենք արդյունաբերության մի շարք ճյուղերում ունենք տեմպերի աճման նկատելի ավելացում:

Ճիշտ է, պետք է մատնանշել մետաղի, ածուխի, մասամբ նավթի արտադրանքի աննշան աճումը վերջին ժամանակաշրջանում, այդ նշանակում է, վոր մեր տնտեսության համար վճարական այդ ճյուղերը դեռ ևս բեկում չեն ձեռք բերել: Առանձնապես անհրաժեշտ է մատնանշել նավթային արդյունաբերությանը, վորը կատարելով հընգամյակը, «հանգստացավ դափնիները վրա» և, ունենալով տեմպերը չիջեցնելու լիակատար հնարավորություն, սկսեց խայտառակորեն յետ մնալ ծրագրի կատարման մեջ:

Մինչդեռ, բարձր տեմպերի համար բոլոր պայմանները առկա յեն, մասնավորապես, տնտեսական հաշվարկային հարաբերությունների հիմունքով, հումուլթի և ոժանդակ նյութերի մատակարարումը մեր ձեռնարկություններին անկասկած կարգավորվում է:

Իհարկե, դեռ ևս չկա այնպիսի դրուժյուն, յերբ մենք կարողանայինք լիովին բեռնավորել մեր ձեռնարկությունները և չզգայինք կահավորանքի ու տեխնիկական մատակարարման կարիքը, բայց մենք ծրագրի սահմաններում ունենք մատակարարման մեծ կանոնավորություն և սա թույլ է տալիս մեզ հույս դնել արդյունաբերության լավ աշխատանքի հնարավորության վրա:

Յեկրուդը—այդ այն է, վոր գյուղատնտեսության բերքը—թե հացահատիկային և թե մանավանդ տեխնիկական կուլտուրաների բերքը, անկասկած լավ է, վոր դարձյալ տալիս է յերկրամասում տնտեսական նշանակալից աճման հնարավորություն: Զարգանում է մեր սոցիալիստական բազան վոչ միայն դաշտադրոժության, այլ և կենդանարուծության



59067-66

և գյուղատնտեսութեան այլ ճյուղերի մեջ: Աճել, ամբողջացնել են մեր սովխոզներն ու կոլխոզները:

Յեվ վերջապես, տնտեսական հաշվարկն ու գործավարձը մտցնելու և ամրապնդելու ասպարիզում, հավասարեցման, դիմադրիչության, հոսունութեան դեմ մղվող պայքարում նույնիսկ առաջին յերկչոտ քայլերը տալիս են մեր տնտեսական զեկավարութեան վորոշ բարելավում:

Այս բոլորը թույլ է տալիս մեզ հույս դնել այն բանի վրա, վոր ամենամոտ ժամանակաշրջանում ամենաեյական արդյունքներ ձեռք կբերվեն մեր առաջխաղացման գործում, թույլ է տալիս յենթադրել, վոր 1931 թվականի մեր յերկրամասի տնտեսական աճման պլանն ամբողջովին ապահովված կլինի: Ակնհայտ է, վոր մեր տնտեսութեան առանձին ճյուղերի աճման տեմպերում տեղի կունենա վորոշ տեղաշարժութիւն, սակայն ամբողջովին վերցրած — մեր յերկրամասի արտադրելիք նյութական արժեքների գումարը կհամապատասխանի այն նշումներին, վորոնք արված են մեկ տարի առաջ:

Մինչդեռ, կան այնպիսի տրամադրութիւններ (և չի կարելի ասել, թե նրանք յեղակի յեն), թե պետք է 4-րդ յեռամսյակում վերցնել տնտեսական աճման ճշանակալից չափով իջեցված տեմպեր, ինչպես սովորաբար ասում են, «ոեալ տեմպեր», դրանով քողարկելով կուսակցութեան վորոշումների համար պայքարելու ցանկութեան բացակայութիւնը: Մի քանի միավորումներում և ձեռնարկութիւններում յեղան այսպիսի դրույթներ—4-րդ յեռամսյակի համար տալ նշանակալից չափով իջեցված առաջադրութիւններ, նույնիսկ ընթացիկ տարվա յերրորդ յեռամսյակի համեմատութեամբ իջեցված առաջադրութիւններ: Որինակ,

ածուխի վերաբերմամբ առաջադրվել էր 4-րդ յեռամսյակի համար մի պլան, վորը նույնիսկ ցածր էր 3-րդ յեռամսյակի պլանից, Լենգործարանում նշվել էր 3-րդ յեռամսյակում փաստորեն կատարվածից ավելի պակաս պլան, յերկաթուղային տրանսպորտում նախագծվել էյին յերկաթուղու բեռնաշրջանառութեան տեմպեր, վորոնք ավելի ցածր են 3-րդ յեռամսյակի պլանից:

Ճիշտ է, պետք է ասել, դրա հետ մեկտեղ կան և ուրիշ ծայրահեղութիւններ, ասենք Սելմաշում: Սկզբում Սոյուզսելմաշը նախագծեց Սելմաշի 30-ից ավելի միլիոնանոց ծրագիրը—յերբ 3-րդ յեռամսյակում բաց է թողնվել 11 միլիոն—ապա իջեցրեց մինչև 15 միլիոն, ըստ վորում Ռոստովի Սելմաշի աշխատողները պաշտպանում էյին նախկին թիվը, հույս ունենալով ավելի շատ մետաղ և միջոցներ ստանալ, չնայելով, վոր նրանք հազիվ թե գլուխ հանեն 17 միլիոն ուղղուց ավելի ծրագիրը:

Յես կրկնում եմ—մենք 4-րդ յեռամսյակում վերցնում ենք մեր սնեսուրյան ծավալման զգալի տեմպեր: Որինակ, վերցնում ենք արդյունաբերութեան տարեկան ընդհանուր արտադրանքի 37 տոկոսը, իսկ հիմնական շինարարութեան մեջ դուրս է գալիս նույնիսկ մի փոքր ավելի. վորովհետև այդ գործում անցյալում յետ մնալը մեզ ստիպում է լրացնել պակասը, հիմնական շինարարութեան համար բաց թողնված բոլոր միջոցները ոգտագործելու հույսով:

Մեր առաջ կանգնած է մի խնդիր—ցանել 4,5 միլիոն հեկտար և աշնանավար անել 5 միլիոն հեկտար: Մթերել հացի և գյուղատնտեսական հումուրի հսկայական զանգվածներ:

Յեվ հենց այս պատճառով է, վոր մենք պետք է

ամենավճուական հակահարված տանք մեր արդյունաբերութեան, հիմնական շինարարութեան, դուրստնտեսութեան պլանները կրճատման ուղորտունիստական փորձերին:

Իհարկե, մեր մի շարք տնտեսավարների համար դաշտագիյն է մնալ 3-րդ յեռամայակի մակարդակի վրա, կաժ նույնիսկ նրանից ցածր, — կարելի չե հույս դնել ինքնահոսի վրա, չկա վտանգ, թե կսկսեն քաջքշել ծրագիրը չկատարելու համար և այլն: Բայց մենք բոլորիկներ չեյինք լինի, յեթե կանգնեյինք այդ տեսակետին: Մեղանում — մեր խորհրդային տնտեսութեան մեջ — չկա վաստակամոլութեան խթանը, վորը կապիտալիստին ստիպում է գազանաբար կռվել շահի յուրաքանչյուր տոկոսի համար: Մեղանում չկա այդ բանը և այս պատճառով լարված պլաններն անհրաժեշտ միջոց են նրա համար, վորպեսզի ստիպենք մեր տնտեսութեանն ավելի արագ շարժվել, վորպեսզի վերացնենք ամեն տեսակ ինքնահոսային տրամադրութիւնները, ավելի ակտիվ պայքար մղենք մեր տնտեսութեան ծավալման համար:

Սակայն հարկավոր է հենց սկզբից ասել, վոր տեմպերը կիրականացվին մի փոքր այլ կերպ, քան այդ առաջ յեղել է գործնականում: Բավական չի լինի բանը վերջացած համարել ազիտացիայով, լողունգներով կամ թե հասարակական, կուսակցական ճնշում գործադրելով այս կամ այն տնտեսական կազմակերպութեան վրա: Այժմ ամենուհանգիմնականն է — գտնել հետևյալ հարցի գործնական լուծումը. — ի՞նչպես նյութապես շահագրգռել յուրաքանչյուր տնտեսական կազմակերպութեան, յուրաքանչյուր բանվորի, յուրաքանչյուր կոլխոզնիկի՝ նրանց աշխատանքների արդյունքների մեջ, ի՞նչպես նյութական օգնագրգռվածութիւնը ծառայեցնել մեր օրնաբարության սեմպերի արագացման:

Դրանումն է այժմ հարցի ուղն ու ծուծը: Խոսքը նոր լուծումըի մասին չէ, այլ այդ շահագրգռվածութեան գործնական կազմակերպման մասին: Տնտեսական հաշվարկի հարցը, ուղղակի և հառաջատվական գործավարձի խնդիրը, ընկեր Ստալինի առաջադրած վեց «պայմանները» պատասխան են տալիս, թե ինչ ճանապարհով պիտի հաջողեցնել այդ բանը:

Իհարկե, նյութական շահագրգռվածութեան հետ մեկտեղ, պետք է բոլորակապեմ ղեկավարել, պատասխանատվութիւն պահանջել այս կամ այն սնեստական խնդիրների իրագործման համար, պետք է առաջվա պես, նույն իսկ ավելի մեծ չափով, կազմակերպել մասսաներին այդ խնդիրների կատարման շուրջը, պետք է ավելի լայն ծավալել սոցմեցութիւնն յեվ հարվածային օտոմումը, — գործունեյաբար, պրակտիկայում իրականացնել մասսաների կազմակերպումը՝ պայքարելու ձեռնարկութիւններում, կոլխոզներում, ամենուրեք, ուր մենք աշխատում ենք, բարձր տեմպերի, հանդիպական պլաններին համար:

Տնտեսական հաշվարկի հարվածային բրիգադներում, հանդիպական հերթական պլաններում առանձնապես պարզ են արտահայտված հարցի յերկու կողմերը. մեկ կողմից նյութական խրախուսանք, նյութական շահագրգռվածութիւն, մյուս կողմից — հարվածային շարժման, մըրցութեան, գեպի աշխատանքը կոմունիստական վերաբերմունքի կազմակերպում: Մեզ անհրաժեշտ է այժմ կրկնակի քառող ույժով ստան ի վեր բարձրացնել մեր սնեստութիւնը:

Մենք պետք է հսկայական աշխատանք կատարենք՝ աշխատանքի կազմակերպման, տնտեսական հաշվարկ մըտցնելու հարցի վերաբերյալ ընկեր Ստալինի ցուցմունքներին հետագա գործնական իրականացման ասպարիզում և, ար-

խատելով նոր ձևով, հասնենք վոչ թե ժամանակավոր կամ ցուցական հաջողութիւնների, այլ կազմակերպենք մեր տնտեսութեան սիստեմատիկ աճումն այն տեսակերով, վորոնք մենք ինքներս ենք նշել:

2. ՄՏՅՆԵԼ ՅԵՎ ԱՄՐԱՊՆԴԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

Տնտեսական հաշվարկի ամրապնդման վերաբերմամբ մենք արել ենք առաջին, յերկչոտ քայլերը: Տնտեսական հաշվարկի ամրապնդման առաջին ետապը կայանում էր նրանում, վոր նախ վերջ տալ մեր տնտեսութեան վարկավորման մեջ յեղած այն ավտոմատիզմին, վորը հանգում էր հետևյալին—մենք փող էյինք տալիս վոչ թե իսկապես արտադրած արժեքների համար, այլ ընդդէմ պլանի և հաճախ իղուր:

Յեւիտոյ խնդիրն էր՝ պայմանագրային հարաբերութիւններ սահմանել ձեռնարկութիւնների միջև, պայմանագրի կարգով ձեռնարկութիւնների միջև փոխադարձ վերահսկողութիւն սահմանել: Չնայելով այն բանին, վոր այս ասպարիղում մենք կատարեցինք առաջին քայլերը, մենք արդեն ունենք մի քանի արդյունքներ: Որինակ, զարնանը, յերբ մեր ծրագիրը կատարվում էր մոտավորապես 73 տոկոսով, դրամական միջոցները պլանի հանդեպ բաց էյին թողնվում 113 տոկոսով, այսինքն ունալ արտադրութեան վարկավորումը կատարվում էր մեկ ու կես անգամ ավելի, քան այդ պահանջվում էր արտադրութեան համար: Այժմ, վերջին յեռամայակում մենք հակառակն ենք տեսնում. մոտավորապես 80 տոկոսով պլանը կատարելու դեպքում բանկը տալիս է միայն 73 տոկոսն այն փողի, վորը հասնում է ըստ պլանի: Ըստ վորում դարնանն աշխա-

տավարձն ուշանում էր, մինչդեռ այժմ այս մասին դանդաաներ կարծես թե չկան: Սա մի ավելորդ անգամ շեշտում է, թե վորքան մեծ, առողջարար դեր խաղացին այն միջոցառումները, վորոնց կիրառում էր կուսակցութիւնը՝ տնտեսական հաշվարկն ամրապնդելու համար: Սա նշանակում է, վոր, չնայելով այս ընադավառում աշխատանքի անկատարելագործութեան, տնտեսական կազմակերպութիւնները կարողացան ավելի խնայողաբար ծախսել միջոցները, կարողացան հաջողեցնել նրանց ավելի արագ շրջանառութիւնը, կարողացան վերջ տալ դեպի փողը յեղած սխալ վերաբերմունքին:

Պայմանագրերի սիստեմին անցան վոչ միայն արդյունաբերութիւնը, այլ և տնտեսութեան մյուս ճյուղերը և սա ամենից առաջ ունեցավ մատակարարման ավելի լավ կազմակերպման հետևանք: Այնուամենայնիվ, այստեղ ըստ էութեան դեռ քիչ բան է արված, քան թե վարկավորումը բարելավելու գործում, վորովհետև խախտումների, դեպի պայմանագիրը ձևական վերաբերմունքի դեպքերը հսկայական քանակութեան են հասնում: Կարելի յե բերել պայմանագիրն անտեսելու, նրա հանդեպ անպատասխանատվութեան որինակների անվերջ քանակութիւն: Սա իհարկե, մեծագուշն վնաս է հասցնում մեր տնտեսութեան ամրացման գործին:

Յերկու ամիս առաջ կառավարութիւնը նոր քայլ արեց տնտեսական հաշվարկի ամրապնդման գործում: Այդ քայլը կայանում է նրանում, վոր միավորումները, տրեստը, ինչպես նաև ձեռնարկութիւնը, ստեղծում են սեփական շրջանառու միջոցներ, պետական բանկից հատկացված միջոցների հաշվին, վորը վարկավորում է այդ կազմակերպութիւններին: Յեվ այդ միջոցներն արդեն

գտնվում են շիրմավորման, տրեստի, ձեռնարկության տնօրինութեան տակ և այն յեկամուտը, վորը կուտակվել է այգ միջոցների շրջանառութեան հիմունքով, ձեռնարկութեան ավելի լավ աշխատանքի հիմունքով,—կարող է գործադրվել հենց իրեն, ձեռնարկութեան հիմնական շինարարութեան և մի շարք ուրիշ կարիքների համար: Բանկի դերը կայանում է ձեռնարկութեան միայն սեղոնային և մի քանի ուրիշ կարիքների վարկավորման մեջ:

Սակայն բանկի կողմից ուղբի առ ուղբի ստուգումը մնում է իր ուշժի մեջ, քանի վոր յուրաքանչյուր ձեռնարկութեան, յուրաքանչյուր միավորում պետք է գնա բանկ վարկ ստանալու, վորովհետև սեփական միջոցներ նրան տրվում են ամենաքիչ չափով: Իսկ վորպեսզի ժամկետավոր փոխառություն տրվի, բանկը պարտավոր է ստուգել, թե արդյոք տնտեսական կազմակերպութեանը կամ ձեռնարկութեանը կատարում է իր պայմանագրերը. արդյոք նա ընդունակ է ժամանակին վճարել իր պարտավորությունները, թնչպես է վճարում բանկին իր պարտավորությունները և այլն, այսինքն, ըստ ելութեան, նրա տնտեսութեան դրութեանը վորոշում է նրա վարկունակութեանը:

Այս պատճառով ձեռնարկութեան բալանսը, արդեֆինսպլանի հետ միասին, կլինի այն հիմնական փաստաթուղթը, վորը պետք է դիտենան թե մեր տնտեսավարների և թե մեր կուսակցական ու արհմիութենական գեկավարները ձեռնարկութեաններում: Իսկ այժմ ըստ սովորականին, բանն այնպես է, վոր յերբ փողի հարցով բանկ է գալիս վերատեսուչը, ապա ըստ գործի ելութեան վոչ թե նա, այլ հաշվապահն է տանում բոլոր խոսակցութեաններն այդ հարցերի շուրջը, իսկ վերատեսուչը սովորաբար շնոր սմին ներկա յե լինում: Այդպես չի կա-

թելի, դրա հետ հաշտվել մենք չենք կարող: Այժմ պետք է ստիպել մեր տնտեսավարներին պետք յեղածի պես զբաղվել փողային հարցով և հարկ կլինի անպայման հաջողեցնել, վորպեսզի այն տնտեսավարը, վորը մտածում է մնալ տնտեսութեան մեջ իր աշխատանքի վրա,—կարողանա հաշվել իր տնտեսութեան շրջանառութեանը, այն էլ վոչ միայն այսուրվա համար, վոչ միայն յեռամայակի կամ տարեկանի չափով, այլ վորպեսզի նա հաշվարկի, թե վոր որերին պետք է վճարումներ կատարե, այնպես, վոր նա կազմի իր տնտեսութեան ֆինանսական պլանը և կարողանա այնպես մասեր անել, վորպեսզի ապահովվի արտահրութեան նորմալ ընթացքը: Պետք է կարողանալ ստիպել մեր տնտեսավարներին այնպես աշխատել, վորպեսզի ձեռնարկութեանն ոգուտ տա: Հարկավոր է, վերջապես, այնպես դնել գործը, վորպեսզի բանն ժամանակ ունենալ տնտեսական ու ֆինանսական դրութեան պատկերը:

Մասնավորապես ամենամոտիկ որերում պետք է ձեռնարկութեաններին ստիպել, վոր զբաղվեն իրենց շրջանառու միջոցներով: Նոյեմբերի մեկից ձեռնարկութեաններն անցնում են ֆինանսավորման նոր կարգին: Նոյեմբերի 1-ից սկսած նրանք արդեն պետք է գոյութեան ունենան իրենց շրջանառու միջոցներով:

Տնտեսական հաշվարկի հարցերը վերաբերում են նաև մեր կոպերատիվային և առևտրական կազմակերպութեաններին, գյուղատնտեսութեան մեջ սոցիալիստական սեկտորին: Այն հարցը, վոր պետք է տնտեսական հաշվարկ մտցնել և ամրապնդել վերևից մինչև ներքև, վոր պետք է հաջողեցնել հնարավորին չափ շատ ուղղակի կապեր և պայմանագրեր անմիջականորեն ձեռնարկութեանների և ստորին կազմակերպութեանների միջև—մնում է մեր խնդիրը: Մենք պետք

և հաջողեցնենք, վորպեսզի տնտեսական հաշվարկը չմնա ինչ վոր տեղում, յերկրային միավորումներում, այլ իսկապես զնա մինչև ձեռնարկություն, մինչև ցեխ, մինչև տնտեսական-հաշվարկային բրիգադ, չմնա Յերկրկոոպմիության մեջ, այլ զնա մինչև ռազկոոպմիություն, մինչև վաճառատուն, մինչև առևտրական ցանցի վերջին ողակը:

Իր ժամանակին յեղել են խոսակցություններ այն մասին, վոր տնտեսական հաշվարկի ամրապնդման միջոցները, դա մի գործ է, վոր թուլացնում է մեր պլանային տնտեսությունը, կամ նույնիսկ թշնամի յի նրան: Մի շարք տնտեսավարներ, վորոնք ներքուստ վախենում էյին տնտեսական հաշվարկից,—քանի վոր վերջինս նրանցից պահանջում է ավելի շատ գիտելիքներ, աշխատելու ավելի մեծ հմտություն,—չէյին ցանկանում կիրառել տնտեսական հաշվարկը, առարկելով, վոր պայմանագրային հարաբերությունների կիրառումը կվիժեցնի պլանայնությունը մեր տնտեսության մեջ: Այժմ միանգամայն ակներև է այդ փաստարկումների ամբողջ անհեթեթությունը: Միանգամայն ակնհայտ է, վոր հենց ցնեստական հաշվարկի հիմունքով մենք արդեն ունենք իսկական յեղ Վոչ քե քրքային պլանային սկզբունքի հաջողաբյուսներ: Դա ակներև է նաև ֆիշանսների, մատակարարման և այլ ճյուղերի վերաբերյալ հարցերում:

Բոլորովին ակներև է, վոր մեր տեխնիկական բազայի վերակառուցման հետևանքով, մեր ամբողջ տնտեսության ամրապնդման, սովխոզների ու կոլխոզների հիման վրա գյուղատնտեսության վերակառուցման հետևանքով մենք մեր տնտեսության մեջ ունենք պլանային սկզբունքի անչափելի մեծացում և ծիծաղելի յե մտածել ու խոսել այն մասին, թե տնտեսական հաշվարկը կարող է մի վորևէ չափով

խանգարել մեր տնտեսության պլանավորման: Ընդհակառակը, տնտեսական հաշվարկն ամրապնդում է նրան:

3. ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Միանգամայն ակներև է, վոր միայն աշխատավարձի տրամադրական վերափոխման ճանապարհով կարելի յե վերջ տալ հավասարեցման և, հետևապես, դա միակ ճանապարհն է դիմադրկության և բանուժի հոսունության վերջ տարու: Աշխատավարձի ռեֆորմը, վորն այժմ անց է կացվում տնտեսության յերեք, ըստ էյության վորոշիչ ճյուղերում—յերկաթուղային տրանսպորտում, մետաղագործական և ածխային արդյունաբերության մեջ,— ամենից առաջ ապահովում է բանվորների աշխատավարձի զգալի անուճ այդ մասնանյութում:

«Մտալ» միավորման գործարաններում առաջին կարգի աշխատավարձի ավելացումը մոտավորապես այսպես է.— 2 ուրբ. 50 կ.—2 ու. 70 կ. մինչև 3 ու. 50 կոպ., այսինքն ըստ առաջին կարգի (բաղրյադ) յեղել է 40 տոկոս հավելում հիմնական կարգային վճարի վրա: 3-րդ կարգի համար 6 ուրբուց մինչև 13 ուրբ., այսինքն յերկու անգամ ավելի: Սա շատ լուրջ ավելացում է: Մենք մի շարք տարիներ մեր արդյունաբերության մեջ չենք ունեցել այդպիսի ավելացումներ: Յես արդեն չեմ խոսում կապիտալիստական յերկրների մասին, վորտեղ այժմ ամեն ինչ թարս է գնում, համեմատած մեզ հետ:

Բացի դրանից, ստացվում է լուրջ, մեծ ավելացում, կրկնապատկում—բարձր կարգերի, այսինքն վոբալյայ կադրերի համար և ավելի քիչ բարձրացում—ժամանակավոր սպասարկողների և ցածր կարգերի համար:

Վերջապես, քննց ե կացվում ուղղակի հառաջատվական գործավարձ, այսինքն պարզ ասած՝ բանվորն իր դադգլահի կում ազդեցատի վրա արտադրած պրոդուկցիայի յուրաքանչյուր միավորի համար ստանում ե վորոշ գումարով վորոշ քստ վորում, մետաղագործական արդյունաբերութեյան համար, առաջադրութեյան առաջին մեկ յերրորդականում—մեկ վճար արտադրանքի մեկ միավորի համար, առաջադրութեյան յերկրորդ մեկ յերրորդականում արտադրանքի միավորի համար բանվորն ստանում ե ավելացրած վճար, յերրորդում—ավելի բարձր ե առաջադրութեյունից ավելի արտադրածի համար ավելի մեծ չափով ե վճարը բարձրանում արտադրած պրոդուկցիայի միավորի հանդեպ:

Ի՞նչ արդյունքներ կստացվեն: Առաջին, արդյունաբերութեյան այդ հիմնական ճյուղերից բանվորները վոչ միայն չեն հեռանա, այլ ընդհակառակը, դեպի նրանց կգան, կհավաքվեն արդյունաբերութեյան այդ նյութերի առաջվա, հին կադերերը, այսինքն վերջ կսրվի բանվորական ուժի հոսունություն: Յերկրորդ, մենք կունենանք յորտեղյալ բանվորի օտնագրգովաձուրյուն իր աշխատանքով, կունենանք պակաս վորակյալներ ի ձգտում՝ դեպի ավելի վորակյալ աշխատանքն ե վերջ կտրվի հավասարեցման:

Այնուհետե, կուժեղանա բանվորների շահագրգովածութեյունը, նյութական շահագրգովածութեյունն իրենց աշխատանքի արդյունքների մեջ, ուստի ե վերջ կտրվի դիմադրութեյան, քանի վոր բանվորը չի ուզենա, վոր իրեն պատահական դադգլահ տրվի, վորի վրա հայտնի չե թե նա ինչքան ե արտադրելու: Նա պետք ե ձգտի իր դադգլահը, իր ազդեցատը կարգին պահել, վորպեսզի ամենամեծ քանակութեյամբ արտադրանք տա ե այդպիսով ավելացնի իր աշխատավարձը:

Աշխատավարձի վերաբերյալ վորոշումներում կա նաև յերկու եյական կետ: Առաջին կետն այն մասին ե, վոր բրակը չի վարձատրվում ե վոր բանվորի մեղավորութեյամբ յեղած պարապուրդները նույնպես չեն վճարվում, իսկ ձեռնարկութեյան մեղավորութեյամբ յեղած պարապուրդների դեպքում վճարվում ե տվյալ դրույքի $\frac{1}{2}$ -ի կամ $\frac{2}{3}$ -ի չափով:

Դուք տեսնում եք, թե ինչպես, աշխատավարձի վճարական բարձրացման հետ միասին, յուրաքանչյուր բանվորի շատ աշխատելու հնարավորութեյուն տրամադրելով հանդերձ—աշխատավարձի վերաբերյալ որինքը միջևնույն ժամանակ խիստ շրջանակներ ե տալիս յուրաքանչյուր մեկի վերաբերմամբ, վորը չի ցանկանում աշխատել, չի կարողանում աշխատել, աշխատանքի մեջ չի կոփվել այնպես, ինչպես այդ պահանջվում ե սոցիալիստական յերկրի պրոլետարից, վորը ինչդիր ե դրել՝ տեխնիկա-տնտեսական տեսակետից հասնել ե անցնել կապիտալիստական աշխարհից:

Աշխատանքի վարձատրման նոր սխտեմին անցնելու հարցը—դա մի շատ դժվար գործ ե, վորը պահանջում ե հսկայական գործնական աշխատանք: Նույնիսկ ածուխի ու մետաղի ասպարիզում յեղած աշխատավարձի վերաբերյալ ԺՏԳԽ-ի ու Համարմխորի վորոշումն իրականացնելիս, հենց առաջին քայլերից տեղ ունեն անադին թյուրիմացութեյուններ, այդ վորոշումը սխալ կիրառելու շատ փաստեր: Որինակ, չնայելով կատեգորիկ ցուցմունքին,— հիմնական ցեխերում բոլոր բանվորներին հառաջատվական գործավարձի անցկացնելու մասին,— ձեռնարկութեյունները շատ յերկչոտ, շատ անվճարական են ընթանում այդ ճանապարհով: Հետաքրքիր ե, թե Անդրեևի անվան գործարանն ինչպես եր վործում մեկնաբանել կենտկոմի վորոշումն աշխատանքի գործավարձային, հառաջատվական վարձատրութեյան մասին: Վորոշել

եյին, թե ի նկատի ունենալով, վոր առաջադրությունները փոխվում են յուրաքանչյուր յեռամասյակում, ածում, ավելանում ե մեր արտադրանքը, ապա պահանջվում ե յուրաքանչյուր յեռամասյակում վերաքննել գործավարձային վճարը, նայած առաջադրության ավելացման: Ըստ գործի եյության դրանով վիժեցվում ե հառաջատվական գործավարձի հենց եյությունը, գաղափարը: Հարկավ, դուրս ե գալիս, վոր ավելանում ե բաց թողնվող արտադրանքը, համապատասխան հերպով վերանայվում ե հալոցքում հալվող մետաղի արժեքը, իսկ բանվորի աշխատավարձը մնում ե նույնը, այսինքն բանվորը վոչ մի հերպ նյութապես շահագրգռված չե արտադրանքի աճման մեջ:

Այս սխալներն ու պակասությունները խոսում են այն բացառիկ ուշադրության մասին, վորը պետք ե դարձվի աշխատավարձի վերահառուցման հարցերի վրա:

Քաղաքականապես միանգամայն ճիշտ ե, վոր աշխատավարձի վերակառուցումն անց ե կացվում առաջին հերթին տնտեսության վճողական ճյուղերում, քանի վոր հարկավոր ե առաջ մղել ածուխը, մետաղը, յերկաթուղային տրանսպորտը, վորոնք, հակառակ մեր կուսակցության գծին, յետ են մնացել աշխատավարձի վերաբերմամբ: Այստեղ մենք պետք ե հավաքենք ամենից վորակյալ կադրեր, այստեղ մենք պետք ե հաջողեցնենք նրանց առավել կայունությունը, ամենից առաջ ե մինչև վերջ լիկվիդացիայի յենթարկենք հավասարեցումն ու դիմադրկությունը:

Ակներև ե, վոր արդյունաբերության մնացած ճյուղերի վերաբերյալ ե յուրաքանչյուր առանձին ձեռնարկության նկատմամբ մենք կարող ենք գործադրել տնտեսական քաղաքականության այն եյությունը, վորը տրված ե մետաղագործության ե ածուխի ասպարիզում աշխատավարձի վերա-

բերյալ վորոշման մեջ,—բայց միայն մի շատ եյական սահմանափակումով, վոր քանի դեռ չկա կենտրոնի վորոշումը, մենք չունենք լրացուցիչ ֆոնդեր աշխատավարձն ավելացնելու համար, հառաջատվական գործավարձի վճարման կամ աշխատավարձի ֆոնդի վորևե ընդհանուր բարձրացման համար: Մեր հնարավորությունների սահմաններում, հիմնվելով այն լրացուցիչ ռեսուրսների վրա, վոր մեզ տալիս են աշխատանքի արտադրողականության բարձրացումն ե կիրառվող խնայողությունը,—մենք հառաջատվական գործավարձի հիմունքով աշխատավարձի վերակառուցումը կարող ենք ե պետք ե անցկացնենք նաև ուրիշ ճյուղերում,—բայց դա պետք ե անցկացնել խոհեմաբար, լուրջ մշակելով, չկատարելով թեթևամիտ ու սխալ քայլեր յուրաքանչյուր ձեռնարկության աշխատանքի այդ կարևորագույն հարցում:

Անհրաժեշտ ե ամենալայն կերպով պարզաբանել յուրաքանչյուր բանվորի՝ աշխատավարձի վերակառուցման միջոցառումների նշանակությունն, այն միջոցառումների, վորոնք հսկայական նշանակություն ունեն արտադրության աշխատանքի բարելավման, հենց իրենց, բանվորների նյութական դրության բարելավման համար, քանի վոր այդ միջոցառումները յերաշխավորում են այն բանվորի նյութական դրության շեշտակի բարձրացումը, վորն իսկապես կարող ե ե ուզում ե աշխատել:

Անհրաժեշտ ե նաև ապահովել յուրաքանչյուր առանձին բանվորի արտադրանքի ու վաստակի սխտեմատիկ ե ամենուրյա հաշվառքը, վորպեսզի ամեն մեկն իմանա իր աշխատանքի արդյունքը: Այս հասարակ, կիսատեխնիկական միջոցառումն այժմ ձեռնարկության մեջ ունի վոչ պակաս նշանակություն, քան աշխատանքի հաշվառքը կոխողներում: Վորովհետև միայն այդ

7067



խատավարձի և ևեֆորմի նշանակութիւնն արտադրութեան համար: Անհրաժեշտ է անցկացնել հատուկ կամպանիա՝ յուրաքանչիւր բանվորի աշխատանքի հաշվառքն և նրա վաստակի գրանցումն ստուգելու համար:

Պետք է մասնադեմոնների վարձատրութեան կարգն ևս ըստ գործի ելութեան, անմիջապէս կապել նրանց աշխատանքների արդյունքների հետ, արտադրութեան այն մասի աշխատանքների հետ, վորտեղ աշխատում է այս կամ այն մասնազետը և սա նույնպէս անհրաժեշտ, բացարձակորեն ճիշտ միջոց է:

Իրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է հենց սկզբից աշխատավարձի ամբողջ նոր սխտեմը կապակցել հարվածայնութեան և սոցիալական հետ: Այս կապը միանգամայն բնական և անհրաժեշտ է: Հարկավ, ճիշտ է, վոր ով լավ է աշխատում, ով հարվածայնորեն է աշխատում, ով առաջինն է մրցութեան մեջ, նա յեւ պիտի ստանա ամենաբարձր աշխատավարձը և ամենալավ նյութական ապահովութիւն պիտի ունենա:

Հարկավոր է, վոր արհմիութիւններն այժմ, անհապաղ, իրենց աշխատանքի հիմքը դարձնեն աշխատավարձի հարցերը, այդ ամենաբարդ և ամենապատասխանատու գործի պրակտիկ կիրառման խնդիրը: Պետք է ասել, վոր մինչև այժմ մենք անթույլատրելի վերաբերմունք ունենք թե կուսակցական և թե արհմիութեանական կազմակերպութիւններին կողմից դեպի այդ հարցը: Որինակի համար կասեմ, վոր Սուլինի, կամ նույն Անդրեևայան գործարանի կուսկոմիտեները, քննելով ԺՏԳՆ և Համարհմութիւնի վորոշումը, տառացիորեն արտադրեցին դա իրենց վորոշումներում և դրանով հանգստացան: Այն առաջարկները, վորոնք մտցնում են մեր յերկրային արհմիութեանական կազմակերպութիւնները, նույնպէս չեն կարող մեզ բավարարել: Պետք է արհմիութիւններին յերեսով ընդ-

հուպ դարձնել դեպի աշխատավարձի հարցերը, քանի վոր այժմ դա նրանց մարտական խնդիրն է, մի խնդիր, վորի լուծման համար նրանք պետք է ոգնեն կուսակցութեանն ու անտեսական կազմակերպութիւններին:

Իհարկէ, միայն աշխատավարձը վերակառուցելով, միայն դրամական վճարի փոփոխումով մենք հարցը սպառել չենք կարող, մենք պետք է դեռ մի շարք միջոցներ կիրառենք մատակարարման բարելավման, կենցաղային պայմանների և կուլտուրական սպասարկման սպառիչում, նրա համար, վորպեսզի ապահովենք այն դրութիւնը, վորով չլինի հոսունութիւն, բանվորներն աշխատանքով շահագոգրված լինեն ավելի ձեռնարկութեան մեջ, ավելի ռայոնում, և ավելի քաղաքում: Չէ վոր այժմ վորոշ ձգտում կա կոլխոզների և ձեռնարկութիւնների միջև: Վերջերս հանդիպում Եւնեցա Լինինյան գործարանի մի բանվորի—վորակցալ, մըշտական բանվորի հետ, վորը մի տարի առաջ հեռացել է գործարանից, աշխատում է վորպէս քաղաքամերձ կոլխոզի դեկավարներին մեկը և գոհ է իր վիճակից: Կոլխոզի համար վորակցալ ուժը, կուլտուրական ուժը,—պրոլետարը, վորըն անցել է քաղաքային կյանքի դպրոցը, — դա մի մեծ գյուտ է և կոլխոզը ձգտում է իր մեջ տեղափոխել այդպիսի կազրերը: Պետք է լրջորեն աշխատել բանվորների թե աշխատավարձի և թե կուլտուրական, կենցաղային և նրանց սպասարկման ամեն տեսակ այլ մոմենտների վրա, վորպեսզի ստեղծել մի այնպիսի դրութիւն, վորը յերաշխա վորե կազրերի պահպանումը ձեռնարկութեան մեջ և աշխատանքի արտադրողականութեան բարձրացումը:

Իրա հետ կապված է հիմնական հարցերից մեկը—բանվորների մատակարարման հարցը: Գուցէ և վոչ այնքան սրդյունաբերական սպրանքների մատակարարման, վորքան

պարենային ապրանքները: Վորովհետև դա այն տեղերից մեկն է, վորտեղ մենք չենք հասցնում բավարարել բանվորների աճող պահանջները: Այս պատճառով յես ուզում եմ կանգ առնել կոլխոզների ու սովխոզների կացութայն և աշխատանքի վրա, մեր գյուղատնտեսութայն վրա, վորը բանվորներին պարեն և մեր արդյունաբերութայնը հումույթ մատակարարելու բաղա յե հանդիսանում:

4. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՊՆԳՈՒՄԸ

Յեթե վերցնենք մեր յերկրամասը, համատարած կոթիկտիվացման յերկրամասը, ապա ավարտվող գյուղատնտեսական տարվա փորձից կարելի յե հանել այն յեղրակացությունը, վոր կոլխոզները հիմնականում գրույս են բերում իրենց սնտեսությունը: Դա հանդիսանում է, իհարկէ, վճուղական յեղրակացություն, քանի վոր յեթե հակառակը լիներ, յեթե, ասենք, նրանք տնտեսությունն անհատականներից ավելի վատ վարելին, ապա վաղ թե ուշ կոլխոզներում քայքայում է նրանցից հեռացում կսկսվեր:

Ընդհակառակը, այս տարի յերկրամասում գյուղատնտեսութայն ընդհանուր արտադրանքը (ճիշտ է, նաև անցյալ տարվա համեմատությամբ ավելի լավ բերքի հետևանքով) մոտավորապես մեկ յերրորդով, գուցե և կիսով չափ ավելի յե անցյալ տարվանից, այսինքն մեր յերկրամասի տված մթերքների քանակը մեկ յերրորդականով կամ կիսով չափ ավելի յե անցյալ տարվանից: Կոլխոզներին մնացող դրամական կամ նատուրալ հասույթի մոտավոր հաշիվն առում է, վոր անցյալ տարվա հետ համեմատած, տեղի կու-

նենա 80—90 տոկոս աճում, այսինքն համարյա թե կրկնապատկվում է կոլխոզնիկի յեկամուտը:

Պետք է ասել, չնայելով այն բանին, վոր յերկրամասում այժմ հացահատիկային կուլտուրաները հավաքված են (հացը կալված է մոտավորապես 90 տոկոսով), այնուամենայնիվ մենք, անկասկած, այժմ յետ ենք մնացել քաղհանավոր (պրոպաշնի) կուլտուրաների նկատմամբ: Այժմ մի քանի ռայոններում ուշանում են թե աշնանային կուլտուրաների ցանքը և թե աշնանավարը: Մանավանդ յերկրամասի բերքատու—հարավ-արևմտյան մասերում մենք տեսնք այնպիսի պատկեր, յերբ հացահատիկային կուլտուրաների բերքահավաքն ուշացրած ռայոնները չեն կարողանում գլուխ բերել նաև մյուս խնդիրները, վորովհետև մի վորոշ ժամանակի վրա կուտակվել են մի շարք տնտեսական խնդիրներ:

Յեթե անցյալ տարվա համեմատությամբ, կոլխոզների ու կոլխոզնիկների անչափելիորեն ավելի լավ աշխատանքը պետք է վերադրել նրան, վոր այժմ աշխատանքային որն ու զործավարձը կիրառվել են կոլխոզի կյանքում, հասել են յուրաքանչյուր առանձին կոլխոզնիկի գիտակցութայն, ապա կոլխոզների աշխատանքի հիմնական պակասություններն անհրաժեշտ է ամենից առաջ վերագրել կոլխոզներին աշխատանքը կազմակերպելու անկարողութայն: Ըստ ելության, կոլխոզների ղեկավարներն այժմ կոլխոզում աշխատանքը կազմակերպում են այնպես, ինչպես և անհատական տնտեսութայն մեջ: Անհատական տնտեսութայն մեջ գյուղացիք սկզբում հնձում եյին, հետո կալում կամ ղեզեր կաղմում (նայած իրենց ռայոնի տրադիցիաներին), այնուհետև անցնում եյին ցանքին, հետո աշնանավարին, այսինքն մանր անհատական տնտեսութայն մեջ ստեղծվում էր աշ-

խատանքի անխուսափելի հերթականութիւնն: Անհատական տնտեսութեան մեջ, վորը մի գույճ ձի ունեւր, այլ կերպ չերել կարող լինել: Այժմ խոշոր կոլխոզում պետք է միաժամանակ և հնձեն և կալսեն և դեղեր կաղմեն և հացը կրեն և սիրոսային փոսեր, խողանոցներ կառուցեն—նաև լուծեն մի շարք ուրիշ մեծ խնդիրներ: Այսինքն պետք է կարողանալ դասավորել մարդկանց և քարշող ուժը, կաղմակերպել ընդարձակված տնտեսական պլան և սա կիրառել կյանքում: Պետք է ուղղակի ասել, վոր շատ ու շատ կոլխոզներ կարողացան աշխատանքների հերթականութիւնից անցնել կաղմակերպվածութեան և վորոշ գուզահեռականութեան տնտեսական խնդիրների լուծման գործում: Յեթ է մենք, ինչպես առաջ, ասելինք— «ամեն ինչ կալսի համար» գուցե մենք առանձին կամպանիաներում ունենայինք և մեծ արդյունքներ: Բայց աշխատանքի ընդհանուր հանրագումարի իմաստով մենք կլինեյինք ավելի ծանր դրութեան մեջ և, վոր ամենից կարևորն է, յերբեք չեյինք սովորի խնդիրները լուծել գուզահեռաբար, այնպես, ինչպես այդ պահանջում է խոշոր, կոլեկտիվ տնտեսութիւնը: Ասում են, վոր յեթե մարդուն ջուրը չնետես, նա յերբեք չի սովորի լող տալ: Միևնույն բանն է և այստեղ: Մեծ դժվարութեամբ ձիւք թափելով, յերբեմն քաջըջելով կոլխոզնիկներին ու բրիգադիրներին, կոլխոզները փորձում են կոլխոզում աշխատանքը կաղմակերպել առանձին տնտեսական խնդիրների վերաբերմամբ միաժամանակ, ըստ «գրաֆիկի», ինչպես այդ ընդունված է առկանել: Դա մի դժվար, բայց անհրաժեշտ խնդիր է նրա համար, վորպեսզի իսկապես կաղմակերպել կոլխոզը, վորպես խոշոր սոցիալիստական տնտեսութիւն:

Յերկրորդն այն է, վոր մենք դեռ այժմ ել բավականաչափ չենք զորահավաքում հենց իրեն, կոլխոզի միջոց-

ները: Մի շարք կոլխոզներում, չնայելով աշխատանքային որերով ու գործավարձով շահագրգռված լինելուն, դեռ կոլխոզնիկների զգալի քանակութիւնն դուրս չի գալիս աշխատանքի—մանավանդ կոլխոզնիկների կանայք, այսպես կոչված՝ տանը նստողները: Վոչ բոլոր քարշող ուժն է ոգտագործվում լիակատար և նպատակահարմար: Այս տեսակետից կոլխոզնիկները նույնպես չեն կարողացել բավականաչափ զորահավաքել իրենց բոլոր ռեսուրսները:

Յեկ, վերջապես, աշխատանքի վորակն ևս պահանջում է հսկայական բարելավում նրա համար, վորպեսզի ապահովել հետագայում կոլխոզների աշխատանքի մեծ արդյունքները:

Պետք է ասել, վոր հենց գործավարձն ել, վորի մասին մենք կես տարվա ընթացքում արդեն խոսում ենք,—դեռ այնպիսի գործավարձ չէ, վորն ապահովեր կոլխոզներում աշխատանքի առավելաչափ արտադրողականութիւնը: Շահուարանը պահպանելը շատ պատվաւոր գործ է, սակայն աշխուժամենայնիվ հասկանալի չէ, թե ինչու պահպանը ասարվա ընթացքում պետք է ստանա յերկու անգամ ավելի աշխատանքային որ, քան թե կոլխոզնիկը, վորը քրտնաթոր, կլոր տարին աշխատում է դաշտում: Իսկ մեղանում կան այդպիսի կատակներ, այդպիսի աղավաղումներ, շնորհիվ նրա, վոր մենք ամեն ինչ չենք ընդգրկում և չգիտենք, ուստի և ամեն ինչ ուղիղ չենք վորոշում: Յերբեմն մենք փորձում ենք մաներ անել գործավարձով, բարձրացնում ենք զիշերային աշխատանքի արժեքը 25 տոկոսով, մի քանի աշխատանքների վրա ավելացնում ենք այսինչ քանակութեամբ տոկոսներ,—սակայն այս բոլորն այնքան կոպիտ, վոչ կատարյալ, վոր չի բավարարում կոլխոզների տնտեսական բարդ որդանիղմին և կոլխոզնիկների հասարակական կարծիքին:

Իհարկե, կոլխոզներէ ներքին կազմակերպութեան և անտեսական ամրապնդման հետ կապված ե ամենից առաջ յեկամուսնները բաժանելու հարցը: Դա այժմ վոչ միայն կոլխոզնիկներէ նյութական բարեկեցութեան, այլ յե՛վ կոլխոզներում աշխատանքային դիսցիպլինայի յե՛վ աշխատանքի արտադրականութեան վնասակար հարցն է: Շատ բնորոշ են այն փաստերը, վորոնք տեղի յեն ունեցել կոլխոզնիկներին պարենային ու դրամական ավանսներ տալու ժամանակ: Մեր ուսյոններէ բավական խոշոր մասը համառորեն չեր ուզում անցկացնել ավանսատվութիւնը, գտնելով, վոր իբր թէ փայլե քաժանուճը կոլխոզնիկին հնարավորութիւն կտա չաշխատել, քանի վոր նա հաց կունենա: Փոխանակ կոլխոզնիկին բացատրելու, վոր նրա աշխատանքի հիմունքով, անտեսական տարվա արդյունքներէ հիմունքով նա կստանա անցյալ տարվա հանդեպ մեկ ու կես—յերկու անգամ ավելի, վոր տրվող 15 տոկոս փողն ու հացը դա միայն $\frac{1}{6}$ մասն է այն հասանելիքի, վոր նա պիտի ստանա իր աշխատանքի համար և այդ հիմունքով շահագրգռելու նրան յուրաքանչյուր աշխատանքային որով, գործավարձային մշակութիւնով, փոխանակ սրա մենք տեսնում ենք համառ ցանկութիւն՝ այդ 15 տոկոսը տալ ըստ աշխատանքային որերի: Շատ բնորոշ է մի բլի՛նք քարտուղարի հայտարարութիւնը կոլխոզնիկներէ ժողովում: Կոլխոզնիկներէ համառ խնդրին—տալ նրանց հասանելիք հացը,—քարտուղարը պատասխանեց.—«Թեկուզ դուք լղար, բայց խորհրդային կրկինեք»: Այսպիսի մտտեցումը, դա կուսակցութեանը բացարձակապես թշնամի կերպով հարցադրում է, դա մեր քաղաքականութեան միանգամայն չհասկանալն է: Պետք է կարողանալ յուրաքանչյուր կոլխոզնիկին անտեսապես շահագրգռել նրա աշխատանքի արդյունքներով, պետք է այդ-

պիտով քաշել նրան դեպի սոցիալիստական աշխատանքը, —ամեն կերպ ծավալելով մասսայական աշխատանքը, մերցնելով և այլն և իրագործելով պրոլետարական հաստատուն ղեկավարութիւն :

Մեքենայաբար մտնելով կոլխոզին, գրուխ չհանելով նրա անտեսութիւնից, հարցերը վճել այժմ նույնպես չի չի կարելի: Աշխատողի այն տիպը, վորն իր ժամանակին վարչականութեան հետեից եր ընկել, հեռվից—հեռու վորոշում եր անհատական գյուղին վերաբերվող հարցերը—այժմ առանձնահատուկ փնաս է բերում: Այժմ պահանջվում է գործի գիտութիւն, անտեսական մտտեցում յուրաքանչյուր առանձին կոլխոզնիկի, յուրաքանչյուր բրիգադայի աշխատանքին:

Այժմ ծավալվում է ցանքը, վորը կոլխոզից և կուսակցական կազմակերպութիւններէ պահանջում է մանրակրկիտորեն կազմակերպել աշխատանքը: Միայն աշխատանքի ճիշտ կազմակերպումով, մասնավորապես ցանքի ամբողջ ժամանակաշրջանում բրիգադներ ընտրելով և տվյալ աշխատանքին ամրացնելով, ինչպես նաև գյուղում ամբողջ քարշող ույժի 75 տոկոսի ամրացումով, առանձին աշխատանքների գործավարձային ճիշտ գնահատումով, միաժամանակ վճուպեա պայքարելով այդ կամպանիայում ամբողջ կոլխոզային հասարակայնութեան գործաւաճման համար,—մենք պետք է ամենամոտ որբերում ապահովենք ցանքի գործում գոյութիւն ունեցող յետամնացութեան լիկվիդացիան: Պետք է մեկնաբանել յուրաքանչյուր կոլխոզնիկի, վոր ցանքսի ուշացումը—դա ուղղակի հարված է դալիք տարվա բերքին, այսինքն կոլխոզնիկի յեկամուտներին:

Մի-յերկու նկատողութիւն սովխոզներէ վերաբերմամբ: Այս տարի մեր սովխոզները բերքահավաքման կամպանիայից դուրս յեկան նշանակալից չափով գզգզված դրութամբ: Չի

կարելի ասել, վոր մեր սովխողները գործը վիժեցրին, դա ճիշտ չէր լինի: Մեր սովխողները կտան մոտավորապես 25, դուրս և ավելի միլիոն փութ հաց, այն էլ ավելի վատ հողերից, քան թե կոլխոզները: Վորովհետև իր ժամանակին ամենալավ հողերը վերցրել են գյուղացիները, կոլխոզներն, իսկ ամենավատերը բաժին են ընկել սովխողներին: Բայց բոլորովին անկասկած է, վոր այժմ մեր խոշոր սովխողներն ապրում են մանկական շրջանի այն նույն հիվանդությունները, վոր ապրել է թե Ստալինգրադի արակտորային գործարանը, թե Սելմաշը և այլ ձեռնարկությունները: Անկասկած է, վոր սովխողներում այժմյան բերքահավաքի զգալի պակասությունները հետևանք են վոչ միայն յեղանակի և այլ աննպաստ պայմանների, այլ և նրա, վոր մենք դեռ բավականաչափ չենք տիրապետել արտադրության: Մենք պետք է շատ բան վերանայնք, շատ բան ուղղենք, հետագայում սովորելով այս տարվա սխալներից ու պակասություններից և հետևյալ տարում դուրս դանք մեծ հազթանակներով:

Ակներև է նույնպես, վոր սովխողների և կոլխոզների մի մասի վերաբերմամբ անցած բերքահավաքի փորձից մենք պետք է հանենք մի շարք յեղրակացություններ: Ամենից առաջ—յեղրակացություն այն սովխողների և կոլխոզ-գիջանտների վերաբերմամբ, վորոնք կան մեր յերկրամասում: Բոլորովին պարզ կարելի չէ համոզվել նրանում, վոր խոշոր, գիզանտ-կոլխոզներն ավելի վատ են գլուխ բերում իրենց տնտեսական խնդիրները: Միևնույնը պետք է ասել նաև գիզանտ-սովխողների մասին: Հարկ կլինի վերանայել նաև ՄՏԿ-ների աշխատանքն այն տեսակետից, վորպեսզի նախ նրանց մի փոքր մոտեցնել կոլխոզներին, մի փոքր ապա-խոշորացնել և անմիջականորեն շահագրգռել հենց իրենց,

ապասարկվող կոլխոզների աշխատանքի տնտեսական արդյունքների մեջ:

Ահա այն հարցերի գումարը, վորոնք մենք սովորաբար անվանում ենք կոլխոզների կազմակերպչական—տնտեսական ամրապնդման հարցեր և վորոնց վրա առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Կենտրոնական Կոմիտեն՝ կոլեկտիվացման վերաբերյալ իր վերջին վորոշումներում: Այն հարցը, վոր պետք է ընդգրկել մեր ղեկավարությամբ, տնտեսապես կազմակերպել այն կոլխոզները, վորոնց մենք ստեղծել ենք վերջին 2 տարվա ընթացքում, կազմակերպչորեն—տնտեսապես ա մ ր ա պ ն դ է ւ նրանց—դա ամենամոտ ժամանակաշրջանի համար հիմնական և վրձնողական հարցն է, վոր պետք է լուծվի վոչ թե մի ինչ-վոր առանձին խնդրի կարգով, այլ հենց այն տնտեսական խընդիրների լուծման պրոցեսում, վորոնք այժմ կանգնած են կոլխոզիկների առաջ—ցանք, աշնանավար, համայնացված նախրի պատրաստություն ձմեռելու համար, հացի և այլ գյուղատնտեսական արտադրանքի—արևածաղկի, բամբակի, ծխախոտի և այլ արտադրանքի հանձնում:

5. ՄՔԵՐԵԼ ՀԱՅ, ՄԻՍ, ՅՈՒՂ

Մեր գյուղատնտեսությունը—իննը տասներորդական չափով ի հաշիվ կոլխոզների և սովխողների—պետք է այս տարի տա հսկայական զանգվածներով, բազմամիլիոն փութ հաց: Ցանցային ցարածուրյունների անուսն յեվ այս ցարվա բեռն անպայման ապահովում են մեք հացի պլանի կատարումն ու գեղակատարումը: Մինչև այսօր մենք մթերել ենք մոտավորապես 65 տոկոս, այսինքն տարեկան պլանի մոտ յերկու յերրորդը: Դա, իհարկե, անբավարար է, քանի վոր

կուսակցութեան Յերկրկոմի պլենումը պահանջում էր, վորպէսզի առ 15-ը սեպտեմբերի մենք կատարեյինք պլանի յերկու յերրորդը—և վոչ թե առ 5 հոկտեմբերի: Դա անբավարար է նաև այն պատճառով, վոր սեպտեմբերի մթերումները և հոկտեմբերի առաջին հնգօրյակը տալիս են հացամթերման տեմպեր, վորոնք ցածր են անյոյալ տարվանից:

Դրա հիմնակոն պատճառը հետևյալն է.—յերբ պլանի կատարումը հասավ մտավորապես տարեկան պլանի 50 տոկոսին, ապա պարզվեց, վոր, չնայելով այն հանդամանքին, վոր ընդհանրապես ռայոններին ճիշտ է տրվել հացամթերումները պլանը, ռայոնները չեն կարողացել ինչպես պետք է այն բաժանել կոլխոզների վրա: Հայտնաբերվել են փաստեր, յերբ մի կոլխոզում բոլորովին հաց չի մնացել աշխատանքային որվա համար, իսկ նույն ռայոնի հարևան կոլխոզում, վորը նույնպիսի բերք է ստացել, յեղել է 17 և ավելի կիրգբամ աշխատանքային որվա համար, այսինքն մեկ կոլխոզնիկը, նույնիսկ բարեխղճորեն աշխատելով, կարող էր մնալ առանց հացի, իսկ մյուսը պիտի ստանար 400—500 փուլթ: Այս պատճառով սեպտեմբերի սկզբին հարկ յեղավ հացամթերման ընթացքում ուղղումներ մտցնել առանձին ռայոնների կոլխոզների պլաններում: Հենց այստեղ էլ հայտնաբերվեց մեր կադրերի մի մասի հարմարված չլինելը նոր պայմաններում աշխատելուն: Փոխանակ անցկացնելու անհրաժեշտ ուղղումները, տեղերում, ինչպես և առաջ, մեխանիկորեն արտահանում էլին հացը, չհետաքրքրվելով կոլխոզի տնտեսական դրութեամբ և այժմ դարձյալ մեխանիկորեն դադարեցրին այդ հացի արտաձումը, բռնելով մի այսպիսի դիրք—ամեն կերպ պաշտպանվել պլանի դեմ:

Պետք է վերջ տալ այդ ոպորտունիստական յերևույթին, յերբ բացակայում է հարցը ճիշտ, բոլշևիկորեն դնելու, Թ-

ուանձին կոլխոզներում ուղղումների անհրաժեշտութեանը զգաստորեն հաշվի առնելու, հացամթերման պլանի կատարման համար մարտականորեն պայքարելու ցանկութեանը: Այստեղ ոպորտունիզմի ուժը, կոլխոզների սպառողական շահերը, յերբեմն էլ կուլակային պրովակացիան կատարել են իրենց գործը: Մի շարք դեպքերում մեր ռայոնական կազմակերպութեանները չեն կարողացել ապահովել պլանի իր ժամանակին կատարումը, յենթարկվել են կուլակի խաբեբայութեան և պրովակացիային: Դա մեզ հասցրեց վորոշ վնաս, քանի վոր, յեթե մենք իսկապես ճիշտ և բավարար մասեր կատարեյինք այդ հարցում, ապա մինչև սեպտեմբերի 15-ը կամ 20-ը կկատարեյինք պլանի ²/₃-ը և ավելի հանդիստ կաշխատեյինք թե աշնանավաբի, թե աշնանացանի և թե ուրիշ կամպանիաների ասպարիզում: Իսկ այժմ մեզ սեղմում է ցանքի յեռուն որերում պլանը կատարելու անհրաժեշտութեանը:

Այնուամենայնիվ այդ մասերը, չնայելով բոլոր դժվարութեաններին, մեզ բավական զգալի ոգուտ բերեց այն իմաստով, վոր մեր ռայոնական կազմակերպութեաններն իսկապես աշխատանք թափեցին կոլխոզի տնտեսութեան բազմակողմանի հաշվառման վրա, վոր այժմ այլևս չկա հացամթերումների սխալ պլանավորումով կոլխոզը քանդելու սպառնալիքը: Այս աշխատանքում մենք պետք է, վերջապես, սովորեցնենք մեր կազմակերպութեաններին՝ առանց այլևայլութեան կատարել հացամթերման պլանները, ինչպես պետք է, պայքարել իրենց շարքերում ոպորտունիզմի և կոլխոզներում—սպառողական տրամադրութեանների դեմ: Վոչ մի հետադա ուշացում, վոչ մի հետագա վերանայում մենք չենք կարող թույլ տալ: Մենք կիրառեցինք այն անհրաժեշտ միջոցը, վորը բղեւում է յեղած դրութեանից: Այժմ

մենք պետք է հաստատորեն և առանց առարկութեան կատարենք ռայոնի, կոլխոզի, դյուրլսորհրդի պլանը և վերջինս մենք կատարել պարտավոր ենք ամենակարճ ժամանակամիջոցում:

Հարկավոր է նաև մատնանշել մի ամենայնպէս պակասութեան հասցամթերումների աշխատանքում, վորը կայանում է նրանում, վոր դեռ այժմ անհատական սեկտորում կա շատ չմթերված հաց:

Հանրագումարի բերելով այս, պետք է ասել, վոր հասցամթերումների պլանը հիմնականում իրագործված կլինի Հոկտեմբերյան հեղափոխութեան 14-րդ տարեդարձին:

Յերկրորդ հարցը վերաբերում է մսին, ձկան, յուղամթերքներին և այլն, վորոնք տալիս է դյուրատնտեսութեանը:

Կոլխոզներում ապրանքային կենդանաբուծութեան զարգացման վերաբերյալ Յերկրկոմի հայտնի վորոշումը, վոր ընդունվել էր ապրիլի վերջին, արդեն իրացվում է: Չի կարելի անտես առնել այն հաջողութեանը, վոր կա կաթնա-ապրանքային ագարակների կազմակերպման գործում—կոլխոզներում, վորոնք այժմ ունեն ավելի քան 130,000 կով, խոզաբուծական ագարակներ, վորտեղ մենք արդեն ունենք մոտ 50,000 մայր-խոզեր և 150,000 զուլս ընդհանուր քանակ:

Յերբ այդ հաջողութեանները վրա հիմնվելով, մենք փորձեցինք կազմել 4-րդ յեռամսյակի և ամբողջ 1932 թվականի մասմթերումների պլանը, այն ժամանակ մենք համողվեցինք, վոր սոցիալիստական սեկտորը մեզ կտա մոտավորապէս ամբողջ մսի կեսը, այսինքն այդ ճակատամասում համայնացված սեկտորն արդեն բռնում է վճռական դիրք և

բանվոր դասակարգին հաստատապէս ապահովում է կենդանաբուծական մթերքներով:

Այս տեսակետից շատ բնորոշ են յուղի և պանրի մթերումներն այս տարվա ընթացքում: Կաթնա-ապրանքային ագարակների ստեղծման հետևանքով, վորոնցում զբաղվում են 130,000 կով (յերկրամասում յեղած 1,200,000-ից), այս տարի, 3-րդ յեռամսյակում արդեն մթերված է 26,000 ցենտներ յուղ, մինչդեռ ամբողջ անցյալ տարվա ընթացքում մթերված էր 9000 ցենտներ, այսինքն մեծ աղբէն սվել են համարյա յեւեհ անգամ ավելի: 4-րդ յեռամսյակն անպայման կտա յուղի ավելի ևս զգալի քանակութեան: Այս բոլորից կաթնա-ապրանքային ագարակները կտան մոտ 60 տոկոս, սովխոզները—15—18 տոկոս և միայն 20—25 տոկոս—անհատական սեկտորը: Այստեղ հարկավոր է հիշեցնել, վոր ագարակների կազմակերպումն սկսվել է միայն այս տարվա մայիս—հունիս ամիսներին:

Այս վորձը ցույց է տալիս, վոր կենդանաբուծութեան վերակազուցման գործում մենք կանգնած ենք ուղիղ ճանապարհի վրա, բանվոր դասակարգին կենդանաբուծական մթերքներով ապահովելու ճիշտ ճանապարհի վրա:

Սրա հետևանքն այն է, վոր մենք արդեն ունենք բանվորների մատակարարման վորոշ քարելավում: Վերականգնված են հացի մատակարարման հին նորմաները, վորոնք պակասեցվել էին անցյալ տարվա գարնանը,—այսինքն արդյունաբերական քաղաքներում 800 գրամ բանվորներին և 400 գրամ նրանց ընտանիքներին և 700 ու 300 գրամ—մնացած քաղաքներում: Անկասկած է, վոր վորոշ քարելավում կա բանջարեղենի մատակարարման գործում: Վորոշ չափով այս տարի դրութեանը լավ կլինի բուսական, դուցե և կենդանական յուղերի կոզմից: Այս ձմեռը հավանորեն

կլինի վերջին ձմեռը՝ յեղած թերություններէ սրութեան իմաստով: Մենք անկասկած այս տարի կունենանք շատ ավելի բամբակ, ծխախոտ, շաքարի ճակնդեղ և ավելի շատ տեխնիկական կուլտուրաներ մեր արդյունաբերութեան համար: Այս բոլորը հնարավորութեան կստեղծե յերկրամասում զգալի չափով լայնացնելու թեթեւ և վերամշակող արդյունաբերութեան աշխատանքը, վորը մենք պետք է անհապաղ ամբողջովին գործի դնենք:

6. ԾԱՎԱԼԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Բավական չե ավելացնել արդյունաբերական ապրանքների ու պարենի մատակարարման ֆոնդերը: Պետք է հրմտորեն, ճիշտ ոգտագործել, ճիշտ բաշխել և բանվոր սպառողին հասցնել այն, ինչ վոր մենք ունենք:

Այս պատճառով խորհրդային առևտրի հարցը՝ մեր անտեսական աշխատանքի խնդիրներին համապատասխան ապրանքաշրջանառութեանը ծավալելու հարցը հանդիսանում է ամենամոտ ժամանակաշրջանի հիմնական խնդիրներից մեկը: Գործնականորեն սա հանդուժ է շատ պարզ բաների՝ մասնագիտացնել առևտուրը, ծավալել խանութների նոր ցանց, փոխադրական միջոցներ տալ մեր սպառողական կոոպերացիային և առևտուր անող կազմակերպութեաններին, ստեղծել խանութային գործի մասնագետներէ, խանութի աշխատողների կադրեր, դաստիարակել այդ կադրերը: Սա գործնական խնդրի մի մասն է:

Յերկրորդ մասը, դա այն է, վոր պետք է ստիպել առևտուր անել այն կազմակերպութեաններին, վորոնք այժմ առևտուր չեն անում—արդյունաբերական միավորումներն ու տրեստները, սովխոզները: Նույնիսկ կոխտոգներին ստիպել

բանջարեղեն վաճառելու կոոպերացիայի ու պետառևտրի գներով:

Սորհրդային առևտուրը, վորը վերջին հաշիվով պիտի հանդե այն բանին, վոր ապրանքները ծախվեն բոլորին, ծախվեն ամեն մեկին, ամեն մի վաճառատնից — ըստ վորում առևտուր անել կուլտուրապես—վոչ մի կերպ չի վերացնում կենտրոնացված բանվորական մատակարարման հարցը և պետք է ամենախիստ վերահսկողութեան սահմանվի, վոր պէս զի այն ֆոնդերը, վորոնք բաց են թողնվում բանվորներին, առանձին, առաջին ու յերկրորդ ցուցակներով, չծախսվի, այլ ճիշտ ոգտագործվեն, հիմնականում բանվորական փակ կոոպերատիվների միջոցով, ըստ վորում բանվորական փակ կոոպերատիվների առաջ ևս պիտի դնել մի նոր խնդիր,—այն ֆոնդերին, վոր նրանց տրվում են ըստ հաստատուն, կենտրոնացված պլանի, լրացնել, դտնել, ըստ իրենց ուժերով մթերել մատակարարման մթերքներ: Այս նպատակով, բանվ. փակ կոոպերատիվները ամբացվում են վորոշ ուսյոնների, մի շարք մթերքներ մթերելու համար: Մենք պահանջում ենք, վորպեսզի յուրաքանչյուր բանվորական կոոպերատիվ կարողանա հանդես բերել նախաձեռնութեան և ինքնագործունեութեան՝ լրացուցիչ ֆոնդերի մթերման գործում, իսկ դրա համար հնարավորութեան կա և սա յի մի ճանապարհ է խորհրդային առևտրի ծավալման համար:

Ուզում եմ մի-յերկու նկատողութեան անել այսպես կոչված՝ առևտրական վաճառատների մասին, վորոնք ապրանքաշրջանառութեան միջոցներից մեկն են: Նրանց համար ջոկվում են ապրանքների մի քանի ֆոնդեր, վորոնք և ծախվում են բարձր և, յերբեմն զգալիաչափ բարձր գներով: Այս միջոցը բոլորովին ճիշտ է և նա անհրաժեշտ է

շատ տեսակեաներից. թե միջոցների մոբիլիզացիայի տեսակետից, թե գնումները մի փոքր հեշտացնելու տեսակետից— աշխատավորների այն խմբակների համար, վորոնք հնարավորութուն ունեն բարձր գներով ձեռք բերել մի քանի մթերքներ ու ապրանքներ: Այնուամենայնիվ անհրաժեշտ է թե յերկրային կազմակերպութուններում և թե տեղերում խստորեն հետևել, վորպեսզի այն Ֆոնդերը, վորոնք ընդհանրապես աննշան են և բաց են թողնվում առևտրական վաճառատներին, չավելացվեն և առևտրական վաճառատներում գները վորոշված լինեն: Իսկ այժմ մեղանում կա մի այնպիսի հրապուրում, ձգտում, յես կասեյի, նեպմանական պատիկ վողի, վորը հանգում է առանձին փորձերի— առևտրական գները մեկնաբանել իբրև կամայական, բարձրացնել նրանց և լայնացնել ապրանքների Ֆոնդերը, վորոնք ծախվում են այդ գներով: Որինակ, հարկավոր յեղավ դատի տալ մի սովխոզի դիրեկտորին, վորը հնարել էր մի շատ ձեռնտու ոպերացիա— իր հացը ծախել առևտրական գներով (ծիծաղ): Երջանառու միջոցների կուտակման տեսակետից, այս ոպերացիան շատ ձեռնտու յե, սակայն նա վոչ ձեռնտու դուրս յեկավ դիրեկտորի համար, քանի վոր նա պիտի նստի համապատասխան տեղում և հասկանա, վոր անտեսական հաշվարկն ու խորհրդային առևտուրը վոչինչ ընդհանուր չունեն նեպմանական վողու հետ:

7. ԱՇՆԱՆ—ՁՍԵՌԱՅԻՆ ՓՈՒԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին նկատողութունս— յերկաթուղային տրանսպորտի և աշնան— ձմեռային տեղափոխութունների մասին: Դժբաղդաբար յերկաթուղային տրանսպորտն այժմ ել հանդիսանում է մեր անտեսության ամենանեղ տեղը և այ-

ժըմ կապում է մեր ձեռները, պահում է մեր շարժումը դեպի առաջ: Յեթի դուք նայեք, թե մենք ինչպես ենք բաշխում վագոնները մեր առանձին անտեսական խնդիրների միջև, ապա կտեսնեք, վոր թե մեր արդյունաբերական շինարարությունը, թե սովխոզների շինարարությունը դանդաղում, ուշանում են շնորհիվ այն բանի, վոր մենք չենք կարողանում են շնորհիվ այն բանի, վորը հարկավոր է Ստալինգրադում ընկած ահադին քանակությամբ փայտեղենի տեղափոխության համար:

Դուք կտեսնեք, վոր կան դեպքեր, յերբ բանջարեղենը փթում է կայարաններում այն պատճառով, վոր մենք չենք կարողանում վագոններ տալ նբան քաղաք տեղափոխելու— վոր ելեվատորներում հացի փչացման դեպքեր կան այն պատճառով, վոր հնարավոր չէ այն արտածել յերկաթուղային տրանսպորտով և այլն: Տրանսպորտն այժմ հանդիսանում է մեր անտեսության ամենանեղ տեղը, վորը կանգնեցնում է մեր զարգացումը: Կենտրոնական Կոմիտեն ձեռնարկեց մի շարք միջոցներ՝ յերկաթուղային տրանսպորտի դեկապյան յերկաթուղադժի վրա մենք Մոսկվայից, հաղորդակցության Ժողկոմատից ստացել եյինք մի այսպիսի դրույթ— 4-րդ յեռամսյակում կատարել ավելի պակաս բեռնաշրջանառություն քան 3-ում, այսինքն կաշկանդել զարգացման մեր տեմպերն ավելի մեծ չափով, քան անցյալ յեռամսյակում: Մենք ունենք զորացրված տրամադրությունների մի քանի նշաններ: Մինչդեռ մեզանից ամեն մեկը հասկանում է, վոր յեթե տրանսպորտը չկատարի իր դերը, ապա դեպի առաջ և վոչ մի շարժում չի կարող լինել, քանի վոր տրանսպորտը մեր անտեսության բոլոր մասերը շաղկապում է, ամբողջա-

ցնում և յեթե այստեղ թուլացվի մեր եներգիան, ապա մենք անխուսափելիորեն կլիժենք նաև մյուս ճակատամասերի աշխատանքում: Մենք պետք է մեր յերկաթուղու առաջ դնենք այն նույն միջոցառումների կիրառման խնդիրը, վորոնք վերաբերում են արդյունաբերութայն և անտեսութայն ուրիշ ճյուղերին և վորոնք բղխում են ընկեր Ստալինի ցուցմունքներին—հաջողեցնել շոգետարի և վադոնի որական աշխատանքի ավելացումը և ինչ կերպ էլ լինի, հաջողեցնել սրանսպորտի աշխատանքի ավելի բարձր տեմպերը, հաջողեցնել վորպեզի սրանսպորտը չհանդիսանա մեր անտեսութայն նեղ տեղը: Մենք պահանջում ենք մեր յերկաթուղայիններից, վորպեսզի նրանք ապահովեն մեր այս ամենակենսական պահանջը:

Տնտեսական տշխատանքի ծրագիրը, վորն առաջադրված է Յերկրկոմի ու Յերկրգործկոմի հրապարակված վորոշման մեջ, ինքնին պարզ է: Իմ խնդիրն էր՝ կանգ առնել զուտ գործնական հարցերի վրա, վորոնք կապված են այդ ծրագրի իրականացման հետ:

Նա կանգնած է մեր առաջ, վորպես համառ պայքարի խնդիր, վորպես մի խնդիր՝ աշխատանքը կազմակերպելու այնպես, վորպեսզի մեր աշխատանքի յուրաքանչյուր առանձին ճակատամասը ապահովի տեմպերը, վորոնք նախադրված են այդ վորոշման մեջ, վորպես մի խնդիր՝ կազմակերպելու հաղթանակը հնդամյակի 3-րդ, վճռական տարվա աշխատանքները կատարելու գործում: Մենք ստեղծեցինք բոլորովին չտեսնված անտեսություն, մենք այս տարիներին ընթացքում ստեղծեցինք նոր տեխնիկա, քանի վոր մեր տեխնիկական քազան այժմ արդեն ուրիշ է, համեմատած նույնիսկ ամենա-

մատիկ անցած տարիների հետ. մենք վերջին տարիներում կուլակային-կապիտալիստական սեկտորից, մասնավոր տրնտեսությունից, տեղափոխեցինք հսկայական արժեքներ, կուլտոններում սովխոզներում նոր ձևով կազմակերպեցինք մարդկանց հսկայական մասսաներին և այլն: Մենք այդպիսով մեր ձեռքը վերցրինք մի նոր, հսկայական անտեսություն և այժմ խնդիր է դրված լիակատար չափով տիրապետել այդ անտեսության, այնպես տիրապետել վորպեսպի նա, այդ խոշոր սոցիալիստական անտեսությունը տա իր պարունակած բոլոր հնարավորությունները՝ մեր անտեսական աճումն ուժեղացնելու և արագացնելու համար: Անհրաժեշտ է նրան տիրապետել մինչև մւււրամասնությունները: Այժմ մենք պետք է անչափելիորեն շատ զբաղվենք ձեռնարկության, սովխոզի, կուլտոզի ներքին կազմակերպությամբ, աշխատանքի կազմակերպությամբ, տիրապետենք տեխնիկային, յուրաքանչյուր անտեսության յուրաքանչյուր մանրամասնության:

Մենք հավատացած ենք, վոր կկատարենք հնգամյակի 3-րդ, վճռական տարվա պլանը: Մենք գիտենք, վոր հնգամյակն իրագործելու համար նրա հետևյալ, 4-րդ տարում մեզ մնում է մեր անտեսության մոտավորապես 20 տոկոսով աճումը: Այդ 20 տոկոսը մեզ համար ապահովված ու յերաշխավորված է: Մենք գիտենք, վոր նոր գիգանտները, վորոնք գործի յեն անցնում, սովխոզային ու կոլխոզային շինարարության ծավալումն ու ամրապնդումը յերաշխավորում են մեզ մեծ տեմպեր: Մենք գիտենք վոր դավիք տարվա համար պետք է վոչ միայն ապահովենք 5-ամյա պլանի կատարումը—և արդեն վոչ թե 4 տարում, այլ ակներև է մի փոքր ավելի կարճ ժամանակամիջոցում—այլ և պետք է մեր ամբողջ ուշադրությունը դարձնենք աշխատանքի վորակի

վրա, մեր ամբողջ տնտեսութեան ներքին կազմակերպութեան վրա:

Հարված աշխատանքով, համառ ուսուցմամբ, բուշակիկյան կատաղի եներզլայով մենք կապահովենք այդ խնդիրները լուծուով:

Մեր աշխատանքին լարված հետևում են թե մեր բարեկամներն և թե թշնամիները: Բարեկամները հետևում են հուսալով և հավատալով մեր հաջողութուններին և մեր յուրաքանչյուր հաղթանակը հանդիսանում են նրանց հաղթանակը, պրոլետարական հեղափոխութեան հաղթանակը: Թշնամիները հետևում են կատաղի վիսով և մեր յուրաքանչյուր հաղթանակը—նրանց պարտութունն է, նեխվող, քայքայվող կապիտալիստական աշխարհի պարտութունը:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ն Ե Ր

ՌՈՍՏՈՎԻ ԿՈՒՍԱԿՏԻՎԻ ԲԱՆԱԶԵՎԸ, ԸՆԴՈՒՆՎԱԾ 1931 թվի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ԸՆԿ. ՇԵԲՈԼԴԱՅԵՎԻ ԶԵԿՈՒՑ-ՄԱՆ ԱՌԹՎ

Ռոստով քաղաքի կուսակալը, լսելով և ջննելով ընկեր Շեբոլդակի զեկուցումը 4-րդ յեռամսյակի տնտեսական խընդիրների մասին և ամբողջովին միանալով Յերկրկոմի ու Յերկրգործկոմի վորոշման՝ «1931 թվի 4-րդ յեռամսյակի ժողովրդական տնտեսութեան պլանի մասին», վորոշում է պարտադրել տնտեսական, արհմիութենական և կուսակցական կազմակերպութուններին—

1) 4-րդ յեռամսյակի ժողովրդական տնտեսութեան պլանի կատարումը վերածել հարվածային կամպանիայի և բուշակիկորեն կազմակերպել հաղթանակը՝ հնգամյակի յերրորդ տարվա պլանը կատարելու գործում:

2) Ապահովել տնտեսական հաշվարկի ամրապնդման, գործավարձ մտցնելու և արտադրութունն և աշխատանքը կազմակերպելու ուրիշ միջոցների մասին ընկեր Ստալինի ցուցմունքների գործնական կիրառումն և կատարման ստուգումը:

3) Ապահովել ամբողջ յերկրամասում հոկտեմբերի 20-ից վոյ ուշ ցանքի և աշնանավարի պլանի իրագործումը:

4) Մինչև Հոկտեմբերյան հեղափոխութեան 14-րդ տարեդարձը յերկրամասում հիմնականում կատարել հացամթերումները պլանը:

5) Վճռական միջոցներ ձեռք առնել բանվորական մասսաների նյութական և կուլտուրական սպասարկման հետագա բարելավման համար:

6) Բոլոր կուսըջիշնների ամենամատ ժողովներում քննել Յերկրկոմի ու Յերկրգործկոմի վորոշումը «1931 թվականի 4-րդ յեռամսյակի ժողովրդական տնտեսության պլանի մասին»:

Ակտիվը կոչ է անում յերկրամասի բոլոր կուսակցական կազմակերպություններին, բանվորների ու կոլխոզնիկների ամենալայն մասսաներին՝ 4-րդ յեռամսյակի տնտեսական ծրագիրը վերածել սոցիալիստական շինարարության մարտական, հարվածային խնդրի:



ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ 1931ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ՅԵՌԱՄՍՅԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒՅՅԱՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀԿ(Բ)Կ Հյուսիսային Կովկասի Յերկրկոմի ու Յերկրգործկոմի 1931 թվականի հոկտեմբերի 6-ի վորոշումը

1931 թվականի անցած 9 ամսում տնտեսական շինարարության հաջողությունները (արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ) ապահովում են Հյուսիսային Կովկասյան յերկրամասում հնգամյակի 3-րդ, վճռական տարվա ժողովրդական տնտեսության պլանի իրագործումը:

1-ին յեռամսյակում արդյունաբերության դժվարությունները, վորոնց զլխավոր պատճառներից մեկը հանդիսացավ արանսպորտի կազմալուծված դրությունը (հունվար-

փետրվար) և հայտնաբերված աղճատումները տնտեսական հաշվարկի և աշխատանքի վարձատրման պրակտիկայում (հավասարեցում, դիմազրկություն, հոսունություն) — չկարողացան կանգնեցնել արդյունաբերության բուռն աճումը. յերկրամասում 1931 թվականի 9 ամսվա ընթացքում ամբողջ արդյունաբերության (առանց Մատակարարման ժողկոմատի արդյունաբերության) ընդհանուր արտադրանքը մոտավորապես 24 տոկոսով ավելի յե անցյալ տարվա համապատասխան 9 ամսվա հանդեպ, ըստ վորում արդյունաբերության մեջ ընթացիկ տարում չի թուլյատրվել արտադրանքի բացարկման ամառային իջեցում և վերջին ժամանակաշրջանում տեղ ունի արտադրանքի նշանակալից աճում, մանավանդ թեթև արդյունաբերության մեջ:

Կյուղատնտեսության մեջ յերկրամասում հաջող անցկացրած զարնանային գյուղատնտեսական կամպանիան և բերքի բարենպաստ պայմաններն ապահովեցին ընդհանուր արտադրանքի աճումը (1930 թվականի համեմատությամբ, ըստ արժեքի ¹/3-ով ավելի), մանավանդ քաղհանավոր և տեխնիկական կուլտուրաների վերաբերմամբ (յեգիպտացորեն, արևածաղիկ, բամբակ, գենագերչակ և այլն): Կենդանարտածության սոցիալիստական սեկտորի զարգացման ասպարիզում ձեռք են բերված առաջին հաջողությունները, վորոնք ապահովում են կենդանարտածական սովխոզներում և կոլխոզապահովում են կենդանարտածական սովխոզներում և կոլխոզաներում ապրանքային ազարակների ծավալման պլանի կատարումը հիմնականում, համաձայն Յերկրկոմի 1931 թվականի սպրիլի 17-ի վորոշման:

Հացի և գյուղատնտեսության այլ մթերքների մթերման կամպանիաները մինչև սեպտեմբերի 30-ը տալիս են կենտրոնի հաստատած հացամթերումների պլանի կատարման հետևյալ պատկերը. — հասկավոր կուլտուրաներ — 80 տոկոս, բոլոր

կուլտուրաները—63 տոկոս: Մասնաբեռումների տարեկան պլանը (հոկտեմբեր—հոկտեմբեր) կատարված է 103 տոկոսով, ձկնորսութայն ասպարիզում 1931 թվականի պլանն իրագործված է 80 տոկոսով: Յուզի նկատմամբ անցած յերեք յեռամսյակում ամբողջ տարեկան պլանը գերակատարված է: Անցյալ տարվանից ավելի հաջող են ընթանում մի շարք տեխնիկական կուլտուրաների մթերումները:

Գյուղատնտեսական արտադրանքի մթերման այս նախնական արդյունքները խոսում են այն հսկայական հաջողութունների մասին, վոր ունեցել են սովխոզներն ու կոլխոզները վոչ միայն արտադրութայն մեջ, այլ և ապրանքային արտադրանքը պետութայն հանձնելու գործում, խոսում են գյուղատնտեսական արտադրանքի մթերումների պլանները վոչ միայն կատարելու, այլ և գերակատարելու հնարավորութայն մասին:

Տնտեսութայն անշեղ աճումն ապահովեց բանվորների նյութական ու կուլտուրական հետագա բարելավումն և կոլխոզներում—կոլխոզիկների յեկամտի ավելացումը:

Վերջին ժամանակաշրջանում հաջողությամբ անցնում է բնակչութայն միջոցների մորելիզացիան (3-րդ յեռամսյակի առաջադրութայն 103 տոկոսը):

Յեկաբուդային քրանսպորտը, վորը հաղթահարել է 1-ին յեռամսյակի դժվարությունները և աշխատանքի վորոշ բարելավում է հաջողեցրել, այնուամենայնիվ շարունակում է մնալ յերկրամասի ժողովրդական տնտեսութայն ամենանեղ տեղը:

Մատնանշելով նաև յերկրամասի տնտեսութայն մեջ մի շարք ուրիշ լուրջ, բացասական փաստեր,—անցած յեռամսյակներում արդյունաբերութայն մեջ արդեֆինայլանի և հիմնական աշխատանքների պլանի թերակատարումը, աճուխի

նավթի, մետաղի մշակման աճումի անբավարար տեմպերը, հացամթերումների անբավարար տեմպերը սեմպտեմբերին, քաղհանավոր կուլտուրաների բերքահավաքման մի փոքր ուշացումը և մի շարք ռայոններում ցանքի և աշնանավարի ծավալման ուշացումը, քարշող ուլժի վատ կացությունը սովխոզների անբավարար աշխատանքն աշնանային գյուղատնտեսական կամպանիայում, ինչպես նաև շինարարութայն ուսպարեզում (վերջինը—մանավանդ կենդանաբուժական սովխոզներում)—Յերկրկոմն ու Յերկրգործկոմը գտնում են, վոր յերկրամասի թե արդյունաբերութայն և թե սովխոզների ու կոլխոզների համար 4-րդ յեռամսյակում ստեղծվում է ամբողջովին բարենպաստ դրություն՝ տնտեսական շինանարարութայն հերթական խնդիրները լուծելու համար: Նըրանցից հիմնականները 4-րդ յեռամսյակում հանդիսանում են.—

1. Ամբողջ տարեկան արդեֆինայլանի կատարումն արդյունաբերութայն յուրաքանչյուր ճյուղում և յուրաքանչյուր առանձին ձեռնարկութայն կողմից:

2. Գյուղատնտեսական արտադրանք վերամշակող արդյունաբերութայն վճռական ծավալումը—տարեկան պլանից ավելի:

3. Տնտեսական հաշվարկի ամրապնդումը (սեփական շրջանառու միջոցների կազմում, պայմանագրի կատարում) և աշխատանքի հառաջատվական—պրեմիալ—գործավարձային վարձատրություն:

4. Աշնանային ցանքն իր ժամանակին (ամբողջ յերկրամասում հոկտեմբերի 20-ից վոչ ուշ), աշնանավար այն չափերով, վորոնք հաստատված են առաջ (5 միլիոն հեկտար) և նոր ՄՏԿ ծավալում:

5. Մինչև հոկտեմբերի տարեգարձը հացամթերումները

կատարումը հիմնականում (առանց աղունավարձի), ինչպես նաև ուրիշ դյուղատնտեսական արտադրանքի (միս, ձուկ), մասնավորապես՝ տեխնիկական կուլտուրաների (բամբակ, արևածաղիկ, գենագիտչակ և այլն) մթերումների և յերկրորդական եքսպորտի պլանի կատարումն ու դերակատարումը:

6. Սովխոզների նախիրների և կոլխոզների ապրանքային ազարակների ապահովումը ձմռանը—շենքերով ու կերով:

7. Յերկաթուղիով բեռների տեղափոխութան ծավալումը՝ 3 ըդ յեռամայակից վոչ պակաս չափով:

8. Արածածման և ձմեռվա համար բանջարեղենի պլանի կատարումը:

9. Առևտրական նոր ցանցի ծավալումը քաղաքներում և գյուղում արդյունաբերական ապրանքներ ներածելու պլանի կատարումը:

Ընկ. Ստալինի ցուցմունքների վճռական կիրառումը հավասարեցման, դիմադրկութան և բանվորական ույժի հոսունութան դեմ մղվող պայքարում, Կենտկոմի ու Ժողկոմխորի վորոշումների կիրառումը—տնտեսական հաշվարկի մասին (սեփական շրջանառու միջոցների կազմում), աշխատավարձի մասին (ածխային ու մետաղադրծական արդյունաբերութան մեջ), ինչպես նաև կոլխոզների կազմակերպչական տնտեսական ամրապնդման մասին (արտադրութան և աշխատանքի կազմակերպում և յեկամուտի բաշխումը կոլխոզներում), խորհրդային առևտրի ծավալման և բանվորների նյութական-կուլտուրական ու կենցաղային սպասարկման բարելավման մասին,— նախադրյալ և հանդիսանում 4-րդ յեռամայակի տնտեսական պլանի հաջող իրագործման համար:

Յերկրկոմն ու Յերկրգործկոմն անհրաժեշտ են դանում զարահավաքել բանվորների ու կոլխոզիկների ամենալայն

մասսաներին՝ այդ խնդիրները իրագործման համար, կազմակերպել մասսաների լայն շարժումը հանդիպական պլանները, տնտեսական հաշվարկի հարվածային բրիգադների համար, լայն ծավալված սոցիալիստական մրցութան համար և իրականում 4 ըդ յեռամայակը դարձնել հարվածային յեռամայակ, վորն սպահովում և հնգամակի յերրորդ, վճռական տարվա տնտեսական պլանի իրագործումը, վորով պիտի ավարտվի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառույցումը:

1931 թվականի 4-րդ յեռամայակի համար հաստատել հետևյալ առաջադրությունները.—

1) Հյուսիսային կովկասյան յերկրամասում 1931 թվականի 4 ըդ յեռամայակի համար ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը — 605 միլիոն ուբլու (տարեկան առաջադրության 37,1 տոկոսը), վորից համամիութենական նշանակություն ունեցող արդյունաբերության արտադրանքը— 347,5 միլիոն ուբլ:

| | |
|----------------------------------|-------------|
| Հանրապետական | 3,2 մ. ո. |
| Յերկրային | 95,1 մ. ո. |
| Մատակարարման ժողկոմատի | 159,2 մ. ո. |

2) Սահմանել հետևյալ առաջադրությունները հիմնական արտադրություններին.—

| | |
|------------------------------------------|-------------|
| Քարածուխի հանույթ | 1,800 հ. տ. |
| Նավթի և զաղի հանույթ—Գրոդնեվիթ | 3,536 հ. տ. |
| » » » Մայնեվիթ | 453 հ. տ. |
| Գունավոր մետաղներ—արճիձ | 2,200 հ. տ. |
| ցինկ | 2,221 հ. տ. |
| արջասպի յուղ | 4,000 հ. տ. |

Փայտի արտածում 861 հ. խոր. մետր:
 Փայտեղենի մթերում 1 միլ. խոր. մետր:
 3) Հաստատել ինժնարժեքի իջեցման չափը 4-րդ յե-
 առմայակում, Յերկրօդտնախորի արդյունաբերութեան մեջ—
 9,5 տոկոս և Մատակարարման ժողկոմատի—10 տոկոս:

4) Ընդունել Հ. Կով. յերկաթուղին՝րի բեռնաշրջանա-
 ության պլանը 3-րդ յեռամայակի չափով, այսինքն 8,438
 հազար տոնն:

Հանձնարարել Հ. Կով. յերկաթուղագծի վերատեսչութեան
 4-րդ յեռամայակում առանձին շահողութեան տակ առնել այն
 բեռների տեղափոխութիւնը, վորոնք կապված են եքսպորտի,
 հարվածային արդյունաբ. բական կառուցումների և կենդա-
 նաբուծական շինարարութեան հետ:

5) Հաստատել բնակչինարարութեան պլանը 20,835
 հազար ռուբլու և կոմունալ շինարարութեան— 15,550 հ. ո.,
 ապահովելով վարկային պլանը, յիշելով տարեկան պլանը
 100 տոկոսով իրագործելու անհրաժեշտութիւնները:

6. 4-րդ յեռամայակում հիմնական ներդրումների վե-
 բաբերյալ ընդունել հետևյալ առաջադրութիւնները.

Ընդամենը (առանց միութենական, հանրապետական
 արդյունաբերութիւնների և սովխոզների) 169,292 հազ. ո.

Մրանից—

- ա) Յերկրօդտնտխորի արդյունաբերութեան 4,615 հ. ո.
- բ) Մատակարար ժողկոմատի արդյունաբեր. 10,304 » »
- դ) Երկտորոշինարարական արդյունաբերութ. 26,873 » »
- դ) Բոլոր տեսակի տրանսպորտ և կապ 38,340 » »

7. Ընդունել 4-րդ յեռամայակի շինարարութեան պլան-
 ները.—

Արդյունաբերական շինարարութեան մեջ 13,387 հ. ո.
 Կոմունալ շինարարութեան 17,646 » »

Գյուղչինարարութեան 21,499 » »
 7-րդ շինարար. տրեստի 3,277 » »
 Յերկրային բնակարանային կոոպչինարա-
 րութեան 9,247 » »

8. 4-րդ յեռամայակում միջոցների մոբիլիզացիայի
 պլանն ընդունել 150 միլ. ո., պայմանապես այդ գումարի
 մեջ մտցնելով 10 միլիոն ռուբլի, ըստ դաշտա-անասնաբու-
 ծական կոոպերացիայի դերխտորների:

9. 4-րդ յեռամայակի համար յերկրամասի բյուջեյի
 ստուգիչ թվերն ընդունել 56 միլ. ռուբ. չափով:

ՀԿ(բ)Կ Հյուս. Կովկ. Յերկեկոմ
 Հյուս. Կովկասի Յերկեգործկոմ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | Եջ |
|-----------------------------------------------------------------|----|
| 1. Կազմակերպել նոր հաղթանակը | 1 |
| 2. Մտցնել և ամբապնդել տնտեսական հաշվարկը | 8 |
| 3. Վերակառուցել աշխատավարձը | 13 |
| 4. Կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամրապնդումը | 20 |
| 5. Մթերել հաց, միս, յուղ | 27 |
| 6. Ծավալել խորհրդային առևտուրը | 32 |
| 7. Աշնան-ձմեռային փոխադրությունները | 34 |

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

| | |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Ռոստովի կուսակառուցի բանաձևը, ընդունված 1931 թվ. հոկտեմբերի 8-ին, ընկ. Շերոլ- գանի ղեկուցման առթիվ | 39 |
| Հյուսիսային Կովկասյան յերկրամասի 1931 թ. 4-րդ յեռամսյակի ժողտնտեսության պլա- նի մասին | 40 |

За ответственно о
редактора
А. Г. АВАКИАН
За техредактора
ГЮЗАЛЯН

№ 65
1931

Сд в набор 22/X—1931 г.
Сд. в печать 2/XI—1931 г.
Об'ем 1 1/2 печ. листа
Тираж 2000 экз.

ՀՀ Ազգային գրադարան



NL0207507

0899

32. d61

8

9822 6 10 400.

Цена 10 коп.

О. П. 13 О.

Handwritten notes and scribbles in the upper left quadrant.



На армянском языке

Б. ШЕБОЛДАЕВ

ОРГАНИЗОВАТЬ НОВУЮ ПОБЕДУ

(Доклад на собрании рестовского партантива)

Сез.-Кав. Кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР
„КРАЙНАЦИЗДАТ“